**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՄՐՑՈՒՅԹԻ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

27-ը ապրիլ 2018թ.
ժամը $12^{00}$

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության ծառայության պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌէՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր Լ. Թունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ մասնավորապես.

- **Ա/Ձ Նայրի Թորոսյանի** ներկայացված տեխնիկական բնութագրում նշված տեխնիկական պայմանները չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին:
- **«Արմես Գրուպ»** ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված չեն՝ պահպանման երաշխիքային ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս քան 12 ամիս և ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:
- **«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի** նախատեսված թունաքիմկատի տեխնիկական բնութագրում նշված է արտադրման տարեթիվը հստակ 2018թ, ինչպես նաև ազդող նյութի բաղադրիչները կալիումի գլիֆոսատ և գլիֆոսատաթթու (625գ/լ+500գ/լ), այնինչ Ձեր կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է ազդող նյութը՝ 625գ/լ կալիումի գլիֆոսատ կամ 500գ/լ գլիֆոսատաթթու, արտադրության տարեթիվը՝ 2017-2018թթ:
- **«Վարբադ»** ՍՊԸ-ի քիմիական ռեագենտի ներկայացված տեխնիկական բնութագրում նշված տեխնիկական պայմանները լիարժեք չի նշված:
- **«Ֆայեր Պրո»** ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված չեն՝ ТУ 6-03-452-78-ին համապատասխան, լիցքավորվող բալոնի տարողությունը՝ լիտրերով:

Առկա է մասնագիտական եզրակացություն 04.05.2018թ./ կցվում է/:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը:

Սահմանված ժամկետում Ա/Ձ Նայրի Թորոսյանի, «Արմեն Գրուպ» ՍՊԸ, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ, «Վարբադ» ՍՊԸ, «Ֆայեր Պրո» ՍՊԸ -ն չտրկել են իրենց անհամապատասխանությունները:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 **16.05.2018թ.** որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցներին որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել Ա/Ձ Նայրի Թորոսյանի, «Արմեն Գրուպ» ՍՊԸ, «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ, «Վարբադ» ՍՊԸ, «Ֆայեր Պրո» ՍՊԸ -ներին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Գնահատող** Տ. Մաթևոսյան

**Գնահատող** Ա. Համբարյան

**Գնահատող** Լ. Թունյան

**Գնահատող** Կ. Բրուտյան

**Գնահատող** Հ. Բարսեղյան

**Գնումները համակարգող՝** Տ. Բաղդասարյան